ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը՝ Միլենա Հովհաննիսյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝ Եվրասիական տնտեսական միության և Եվրասիական տնտեսական միության անդամ – պետությունների հետ համագործակցության բաժնի պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝ ք. Ալմաթի (Ղազախստանի Հանրապետություն) 2023 թվականի մայիսի 15-ից մինչև մայիսի 17-ը:

4. Հրավիրող կողմը՝ Եվրասիական զարգացման բանկ

5. Գործուղման նպատակը՝

Մասնակցություն Եվրասիական զարգացման բանկի կողմից կազմակերպվող Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի զարգացումը ֆինանսավորող հաստատությունների ասոցիացիայի (ADFIAP) (այսուհետ՝ Ասոցիացիա) 46-րդ ամենամյա հանդիպմանը:

6. Քննարկված թեմաները՝

1) Ներդրումները որպես Ասիայում կայուն աճի շարժիչ ուժ. զարգացման ինստիտուտների դերը և առաջնահերթությունները,
2) Թվային ենթակառուցվածքներ,
3) Ֆինանսական ենթակառուցվածքներ,
4) Ջրամատակարարում, էներգետիկա և կոմունալ ենթակառուցվածքներ,
5) Ղազախստանի և Կենտրոնական Ասիայի ներդրումային գրավչությունը,
6) «Կանաչ օրակարգ» զեկույց:

7. Հանդիպումները, ելույթները՝

Առանձին ելույթներ նախատեսված չէին: Կայացել են առանձին հանդիպում - քննարկումներ Եվրասիական զարգացման բանկի գործընկերների հետ:

8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Մի շարք դրամաշնորհային և ներդրումային նախագծերի իրականացման նպատակով պայմանավորվածություն է ձեռք բերվել ընթացիկ ամսվա մեջ անցկացնել առցանց քննարկում:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Շփումները նշված զարգացման ինստիտուտի համապատասխան շրջանակների հետ օրակարգ է բերել ԵԶԲ տնտեսական աջակցության հիմնադրամի միջոցներից ՀՀ ՖՆ գանձապետական համակարգի կատարելագործման նպատակով դրամաշնորհի տրամադրման հնարավորության նախատեսման հարցը, որը սահմանված քննարկումների արդյունքում կդիտարկվի և կհստակեցվի ֆինանսների նախարարության կողմից:

Գործուղվող՝

Եվրասիական տնտեսական միության և Եվրասիական տնտեսական միության անդամ – պետությունների հետ համագործակցության բաժնի պետ
Միլենա Հովհաննիսյան

22.05.2023թ.